ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հունիսի 2011թ. **N------ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման N 4 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) «Ի.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Կազմակերպական վարչություն» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1 կետով.

1.1	վարչության պետի տեղակալ	1	250,0		250,0

իսկ 3-րդ կետի «առաջատար մասնագետ» բառերը և «170,0» թվերը փոխարինել «առաջին կարգի մասնագետ» բառերով և «165,0» թվերով ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «5» և «940,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «6» և «1185,0» թվերով:

2)«Ի.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քարտուղարություն» գլխի «Ընդհանուր բաժին» ենթագլխի 7-րդ տողի «4» և «680,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «6» և «1020,0» թվերով, իսկ 9-րդ տողի «8» և «1240,0» թվերը՝ «7» և

«1085,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «50» և «8177,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «51» և «8362,0» թվերով:

3) «I.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «414» և «77829,5» թվերը փոխարինել համապատասխանաբար «416» և «78259,5» թվերով:

4) «II.Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Հասարակական կարգի պահպանության ծառայություն» գլխի 2-րդ կետում «1» և 6-րդ սյունակի «250,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «2» և «500,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «40» և «6880,0» թվերը փոխարինել «41» և «7130,0» թվերով:

5) «II.Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1547» և «234042,09» թվերը փոխարինել համապատասխանաբար «1548» և «234292,09» թվերով:

6) «Ամբողջը» տողում «1961» և «311871,59» թվերը փոխարինել համապատասխանաբար «1964» և «312551,59» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար-փոխվարչապետի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ստորև նշված հանգամանքներով՝

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության գործառույթներին ավելացել են նաև Երևանի ավագանու իրավական ակտերի կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթը, ինչպես նաև հաշվի առնելով վարչության աշխատանքային ծանրաբեռնվածությունը, նախատեսվում է լրացուցիչ ավելացնել 1 միավոր վարչության պետի տեղակալի հաստիք, իսկ վարչության առաջատար մասնագետի մեկ հաստիքը փոխարինել առաջին կարգի մասնագետի հաստիքով։

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի կողմից իրականացվող փաստաթղթաշրջանառության ծավալը նվազեցնելու և չհիմնավորված կենտրոնացումն ապակենտրոնացնելու նպատակով Երևանի քաղաքապետի 11.02.2011թ. N341-Ա որոշմամբ փաստաթղթեր ընդունելու և դրանց հիմքով ձևակերպված փաստաթղթերը քաղաքացիներին հանձնելու լիազորություններ վերապահվեցին աշխատակազմի այլ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին։ Սակայն նշված որոշման ընդունումից հետո ընկած ժամանակահատվածում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին դիմող իրավաբանական խորհրդատվություն ստանալու կարիք ունեցող քաղաքացիների միջին օրական թիվը (150-200) գրեթե չի նվազել։ Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործունեության բնագավառներին վերաբերող հարցերի առնչությամբ իրավաբանական խորհրդատվություն մինչ օրս մատուցվում է միայն աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջին կարգի մասնագետի համայնքային ծառայության պաշտոնը զբաղեցնող անձի կողմից, ինչն

էլ պատճառ է հանդիսանում մարդկանց կուտակումների։ Ուստի առաջարկվում է աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում ավելացնել մեկ գլխավոր մասնագետի հաստիք և նույն բաժնի առաջին կարգի մասնագետի մեկ հաստիքը փոխարինել գլխավոր մասնագետի հաստիքով,

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատանքային ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով և վարչության գործառույթներն ավելի արդյունավետ իրականացնելու համար նախատեսվում է լրացուցիչ ավելացնել 1 միավոր ծառայության պետի տեղակալի հաստիք։

Առաջարկվող փոփոխություններին համաձայնություն տալու դեպքում Երևանի քաղաքապետարանի հաստիքացուցակում ներառված հաստիքային 1961 միավորների թիվը ավելանալու է 3-ով և այն կազմելու է 1964 միավոր՝ 680,0 հազ. դրամ ամսական աշխատավարձի ֆոնդի ավելացմամբ։

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ առաջարկվում է Երևանի ավագանու 06.07.2009թ. N3-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում նախատեսվում է 4301,0 հազ.դրամի ծախսերի ավելացում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ